

հասան՝ երկայն ժամեր պատերազմեցան հայք եւ մեծամեծ հարուածներ հասուցին Լոցայ վրայ: Իսկ մինչ Լոքա քիչ մը կազդուրեալ՝ դարձեալ յարձակեցան հայոց վրայ, Գուրգէն չի կարենալով այլեւս համբերել, մտրակեց իւր քաջ երիվարը, զարկաւ պատռեց թշնամեաց ձախ թելը եւ սկսան փախչիլ իր առջեւէն, կը հալածէր զիրենք եւ կը սատակէր զիրենք այնչափ զօրութեամբ, որ աւելի էին անոնք որ մեռան Գուրգէնի Սուրեն քան թէ անոնք, որ մնացին: Իսկ աջ թելը տաճկաց յարձակեցաւ հայոց ձախ թելին վրայ եւ շարժեցին զայն, եւ դարձան, որ պաշարեն Գուրգէն, բայց չի կրցան դիմանալ Լորա զօրութեան եւ խորտակեցան Լորա առաջ: Եւ էլ չի համարձակեցան ելնել եւ մտնել Վասպուրական աշխարհք տաճկաց զօրքը, վասնզի սաստիկ երկիւղ ինկաւ իրենց սիրտը:

Բայց Գուրգէնի սրտին մեծ վերքը պատերազմէն առաջ եւ պատերազմէն վերջ Լաւ երիտասարդ պահապանին խօսքերն էին. «Վասպուրականի ազատներէն Լաւ միաբաներ են Լոցայ հետ»: Ինչ պիտի զրուցէր Յովնան հիմա այդ մարզիկը ազգի եւ հաւատքի թշնամիներու հետ տեսներ, որ եկեր են իրենց ազգին դէմ պատերազմելու, կ'ըսէր ինքնիրեն, եթէ Լա որ երեք մատնիչ կախելու համար այնչափ տաժանմունք յանձն կառնուր, պէտք է որ ես էլ խիստ օրինակ մ'ընեմ, որ այդ վատ սովորութիւնը վերնա հայ ազատաց մեջէն:

Երբ այս խորհրդածութեամբ երկու հարիւր ընտիրներով կը հալածէր թշնամին, որ մօտ էր Սեւ ջուր գետին՝ յանկարծ փախստական խումբը կանգ առաւ եւ քիչ մը վերջ ետ դարձաւ, վասնզի յայտնի մահը տեսաւ առաջը. թշնամի մը, ուսկից գթութիւն յուսալ անկարելի էր. հազարի չափ հայ գիւղացիք մանգաղներով ու կացիներով զինեալ՝ փախստական տաճիկը կը ջարդէին անխնայ: Ուստի զէնքերը ձգեցին եւ եկան Գուրգէնի, որ անզէն մարդիկը ջարդել չէր կրնար՝ թէպէտ այդ խաբէբայ եւ ստերդումն արաբ ազգին բնութիւնը լաւ կը ճանչէր, եւ ըրած դաւաճանութիւնքը կը յիշէր, բայց դարձեալ հրամայեց զօրաց, որ վնաս չի հասցնեն անձնատուր անզէններու: Բուղայի զօրավարը Բուտել սոցայ մեջ էր. հրամայեց Գուրգէն այդ